

**«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ծրագրի**

Շահառուների խորհրդի 2009 թվականի օգոստոսի 18-ին ժամը 16:00-ին կայացած նիստի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16**

**Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝**

<b>Ասատրյան Լիլիթ</b>	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
<b>Չաղոյան Կարեն</b>	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ
<b>Արմաղանյան Ջարուհի, Լիա Խաչատրյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Չարգացում և ինտեգրացիա» ՀԿ
<b>Մահյան Նարինե</b>	«Փոքր և միջին բիզնեսի» հիմնադրամ
<b>Ոսկանյան Արման</b>	«Տավուշի զարգացման» ՀԿ
<b>Մովսիսյան Կարինե</b>	«Գորիսի Երիտասարդական Միություն» ՀԿ
<b>Տեր-Հովակիմյան Ալեքսանդր</b>	«Հայաստանի բժիշկ-ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ
<b>Միքայելյան Շիրակ</b>	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ
<b>Շահինյան Պողոս</b>	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
<b>Հովսեփյան Աշոտ, Միհրան Հովհաննիսյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Եղվարդ» ՋՕԸ
<b>Բարաղամյան Մարիա, Սասուն Համբարձումյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Քաղաքացիական ծառայողների ասոցիացիա» ՀԿ
<b>Թամարա Աբրահամյան, Անդրանիկ Վերանյանի լիազոր ներկայացուցիչ</b>	«Նոյեմբերյանի համայնքների միություն» ԻԱՄ

**Նիստից բացակայում էին՝**

<b>Ղազարյան Տոնական</b>	«Շենիկ» ՋՕԸ
<b>Նազարյան Հազարապետ</b>	«Եղեգնաձոր» ՋՕԸ
<b>Վիկտոր Ենգիբարյան</b>	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ

**Նիստին մասնակցում էին նաև՝**

<b>Հովսեփյան Արա</b>	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
<b>Գրիգորյան Վիկտորյա</b>	ՇԽ օգնական
<b>Հարությունյան Գայանե</b>	ՀՄԿ Հայաստանյան գրասենյակի կառավարիչ
<b>Լուսինե Վարդանյան</b>	Կայուն ջրային միջավայր ՀԿ, ԿԽ բնապահպանական դիտորդի փոխարինող

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Կարինե Մովսիսյանը:

Նախագահողն առաջարկեց հաստատել նախօրոք ներկայացված օրակարգը՝

1. 16:00 - ՇԽ ընտրակարգի նախագծի ներկայացում և քննարկում  
*ՇԽ կանոնակարգային հանձնաժողովի անդամներ Կ. Զադոյան, Լ. Խաչատրյան, Ա. Տեր-Հովակիմյան, Պ. Շահինյան*
2. 16:30 – ՇԽ ընտրության ժամանակացույցի և առաջիկա գործողությունների հստակեցում
3. 17:00 – Օգոստոսի 7-ին կայացած Կառավարման խորհրդի նիստի արդյունքների ներկայացում  
*ԿԽ անդամներ*
4. 17:30 – ՇԽ հաշվետվության նախագծի քննարկում  
*ՇԽ հաշվետվության համար պատասխանատու անդամներ Լ. Ասատրյան, Ա. Վերանյան, Ա. Ոսկանյան, Վ. Ենգիբարյան*
5. 18:00 - Այլ հարցեր

Օրակարգը հաստատվեց միաձայն:

#### **Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ**

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՇԽ անդամ Կ. Զադոյանը: Նա համառոտ ներկայացրեց կարգի նախագծի ներկայացված տարբերակը, այնտեղ տեղ գտած հիմնական փոփոխությունները: Մասնավորապես, նշվեց, որ նախորդ կարգի համեմատ առաջարկվող նախագծում բացակայում է Շահագրգիռ կազմակերպությունների ընդհանուր ժողով անցկացնելու դրույթները, ինչպես որ քննարկվել էր ՇԽ նախորդ նիստի ընթացքում: Կ. Զադոյանը ևս մեկ անգամ մեկնաբանեց, թե ինչու է աշխատանքային խումբը առաջարկում գերծ մնալ Ընդհանուր ժողով անցկացնելուց: Նախ, դաշտում գործող Շահագրգիռ կազմակերպությունները ՇԽ անդամներին տվել են գործունեության մեկ տարվա մանդատ, և ՇԽ-ը լիազորված է կարգավորել ՇԽ բոլոր գործառույթները: Այս պարագայում Ընդհանուր ժողովը մանդատ չունեցող մարմին է և հստակ չեն դրա գործունեության իրավական հիմքերը:

Կ. Զադոյանը նշեց, որ կարգի նախագծում դեռ հստակեցված չեն ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության չափորոշիչները, սակայն հստակ է, որ ՇԽ անդամները չեն կարող ընտրվել որպես հանձնաժողովի անդամներ:

Ներկայացվածի վերաբերյալ ձայնը տրվեց Թ. Աբրահամյանին: Նա ողջունեց ներկայացված առաջարկությունները՝ շեշտելով նախորդ տարիներին իր և իր կազմակերպության մասնակցությունը ՇԽ բոլոր հիմնական գործընթացներին:

Թ. Աբրահամյանը կարծիք հայտնեց, որ այս տարբերակը հնարավորություն է տալիս գործել ավելի ճկուն, մոբիլ և հաստակ կանոններով: Առաջին տարիին իրականացվող ընդհանուր ժողովի անհրաժեշտությունը պայմանավորված է եղել կանոնակարգի նախագիծը շահագրգիռ կազմակերպությունների կողմից հաստատելու, ՇԽ-ի ձևավորման և

ընտրյալներին մանդատ տրամադրելու պահանջով: Երկրորդ ընդհանուր ժողովը հրավիրելու պահանջը, պայմանավորված է եղել նույն հարցի վերջնական լուծումը ընդհանուր ժողովի քննարկմանը ներկայացնելու ՇԽ-ի որոշմամբ: Ինչը, Թ. Աբրահամյանի կարծիքով, նվազեցնում է ՇԽ-ի պատասխանատվության և վստահության մակարդակը, խոչընդոտում ձևավորված հանրային կառավարման մասնակցային ինստիտուցիոնալ մարմնի, ինչպես նաև քաղաքացիական հասարակության զարգացման գործընթացներին:

ՇԽ անդամ Լ. Ասատրյանը իր ելույթի ընթացքում նշեց, որ մնում է նույն կարծիքին, որ անհրաժեշտ է անցկացնել ընդհանուր ժողով նախ ընտրական հանձնաժողով ընտրելու նպատակով, ինչպես նաև ներկայացնելու ՇԽ հաշվետվությունը:

Լ. Ասատրյանի առաջարկության կապակցությամբ հնչեցին հետևյալ կարծիքները.  
ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանը նշեց, որ այն պարագայում, եթե ՇԽ-ը որոշի անցկացնել ընդհանուր ժողով, պետք է հստակ լինեն ժողովի լիազորությունների շրջանակները և դրանք պետք է լինեն ավելի լայն, քան ՇԽ հաշվետվության ներկայացումը: Ա. Տեր-Հովակիմյանը նշեց, որ ՇԽ-ի հիմնական պարտավորությունն է ապահովել ընտրությունների ազատ, արդար և թափանցիկ անցկացումը, իսկ դա ապահովելու համար այս պարագայում նախատեսված են այլ գործընթացներ, այդ թվում, ընտրությունների կարգը հանրային քննարկումներ, ընտրական հանձնաժողովի անդամների բաց ընտրություն, մշտական կապ հետաքրքրված անհատների հետ և այլն:

Պ. Շահինյանը մտահոգություն հայտնեց, որ իր համար հստակ չեն ընտրական հանձնաժողովի ընտրության մեխանիզմները և այդ տեսակետից նա նույնպես կողմնակից էր ընդհանուր ժողովին:

Ա. Ոսկանյանը իր կողմից առաջ քաշեց մի նոր առաջարկություն՝ անցկացնել ընդհանուր ժողով, լսել ներկաների կարծիքները և առաջարկությունները, սակայն վերջնական որոշումը թողնել ՇԽ-ին:

Ներկաների մեծ մասը դեմ արտահայտվեցին վերոնշյալ առաջարկությանը.

Թ. Աբրահամյանը նշեց, որ դա կառաջեցնի մասնակիցների դժգոհությունը, քանի որ ցանկացած գործընթացի մասնակից ցանկանում է իր դերն ունենալ որոշումների կայացմանը:

Ա. Տեր-Հովակիմյանը նշեց, որ այս առաջարկությունը չի կարող դրվել քվեարկության, քանի որ այն հակասում է նախորդ քվեարկությանը, երբ ՇԽ-ը հետևելով ՀՄՀ-Հայաստանի տնօրենի առաջարկության, որոշեց ընտրել երկու տարբերակների միջև՝ կա՛մ թողնել ընտրության կարգը այնպես, ինչպես կա, կա՛մ ընդհանրապես չանցկացնել ընդհանուր ժողով:

Վերջում նաև հնչեցին ելույթներ.

Թ. Աբրահամյանը կոչ արեց ՇԽ անդամներին հավատարիմ լինել այն մոտեցմանը, որ ընտրված մարմինը իր գործառույթների համար պատասխանատվությունը պետք է կրի ամբողջությամբ, ինչը Հայաստանում կձևավորի նաև մշակույթ, երբ կարող ես պահանջել մեկից:

Նախագահող Կ. Մովսիսյանը նույնպես առաջարկեց ՇԽ անդամներին լինել ավելի վճռական և ընտրական գործընթացի պատասխանատվությունը վերցնել իրենց վրա:

Միևնույն ժամանակ ներկաներին հիշեցրեց, որ ՇԽ ցանկացած որոշման պետք է նախորդի լայնածավալ քննարկումներ հանրության մասնակցությամբ, իսկ խելամիտ առաջարկությունները պետք է քննարկվեն և անհրաժեշտության պարագայում ընդունվեն ՇԽ-ի կողմից:

Ընդհանուր քննարկման արդյունքում նախագահողը քվեարկության դրեց հետևյալ առաջարկությունը.

ՇԽ-ը հավանություն է տալիս ՇԽ անդամների ընտրության կարգի ներկայացված նախագծին, որը դրվում է հանրային քննարկման, ստացված առաջարկությունները քննարկվում են, իսկ վերջնական նախագիծը ընդունվում է ՇԽ-ի կողմից առաջիկա նիստում.

կողմ` 9, դեմ` 0, ձեռնպահ` 2, մեկ մասնակից (Լ. Ասատրյան) չքվեարկեց:

### **Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ**

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Կ. Չադոյանը: Մեջբերելով ՇԽ անդամների ընտրության կարգի նախագիծը` ներկայացրեց ընտրության գործընթացի նախատեսված ժամանակացույցը`

մինչև սեպտեմբերի 6-ը ՀՄՀ-Հայաստանի կայքում կզետեղվի ՇԽ անդամների ընտրության կարգի վերջնական տարբերակը,

ընտրություններից 30 օր առաջ կհայտարարվի Ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության մասին:

Առաջարկություն եղավ կարգի նախագծում չնշել ընտրությունների հստակ օրը և վայրը, քանի որ այն կարող է ենթարկվել փոփոխության:

Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց ՇԽ անդամներին մեկշաբաթյան ժամկետում ներկայացնել իրենց առաջարկությունները ընտրական հանձնաժողովի անդամների ընտրության չափորոշիչների վերաբերյալ:

Ներկայացված առաջարկությունները ընդունվեցին ի գիտություն:

### **Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ**

ԿԽ անդամ Ա. Ոսկանյանը ներկայացրեց ԿԽ նախորդ նիստի հարցերը և դրանց շուրջ ծավալված հիմնական քննարկումները.

1. ՀՄՀ-Հայաստանի ծրագրի վերանայված Մոնիտորինգի և գնահատման պլանի և վերջինիս հավելված հանդիսացող ծրագրի ընդհանուր շահառուների վերլուծության քննարկում և հաստատում
2. ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի և համատեղ ԷյՍԻԴ-իԱյ/ՎՈԿԱ, Մոտ Մաքրոնալդ և ՎԻՍՏԱԱ Պլյուս ընկերությունների միջև 2007թ. փետրվարի 13-ին կնքված պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում
3. ՀՀ ոռոգման և դրենաժի ազգային քաղաքականության և ռազմավարության նախագծի քննարկում և հետագա քայլերի նախանշում
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի վերանայված կառուցվածքի քննարկում և հաստատում
5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ՊՈԱԿ-ի Մոնիտորինգի և գնահատման ղեկավարի և Ծրագրային գործառնությունների ղեկավարի թեկնածուների հաստատում

6. «Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի գնումների վերանայված պլանի քննարկում և հաստատում
7. Այլ հարցեր:

**Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ**

ՇԽ անդամ Լ. Ասատրյանը հանդես եկավ ՇԽ գործունեության աշխատանքային պլանի վերաբերյալ: Նա նշեց, որ աշխատանքները ընթացքի մեջ են: ՇԽ օգնականին առաջարկվեց առաջիկա երկու օրերի ընթացքում ներկայացնել նախնական հաշվետվության առաջարկվող տարբերակը, որից հետո աշխատանքային խումբը կներկայացնի լրամշակված պլանը:

**Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ (այլ հարցեր)**

Հարց բարձրացվեց Բնապահպանական դիտորդի մասնակցության և նրա բացակայության պարագայում փոխարինողի ներկայանալու վերաբերյալ: Փոխարինող Լ. Վարդանյանը ի պատասխան նշեց, որ երբևէ տեղեկացված չի եղել ԿԽ նիստերի վերաբերյալ, այդ պատճառով չի կարողացել մասնակցել նիստերին:

ՇԽ անդամ Ա. Տեր-Հովակիմյանն առաջարկեց ՇԽ օգնականին առաջիկա նիստին տեղեկություն տրամադրել Բնապահպանական դիտորդի մասնակցության վերաբերյալ, ինչպես նաև հրավիրել նրան նիստին հաշվետվությամբ հանդես գալու նպատակով:

*Նախագահող՝ Կ. Մովսիսյան*

*Քարտուղար՝ Վ. Գրիգորյան*

*18-ը օգոստոսի, 2009թ.*